ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 դեկտեմբերի 2025 թվականի N 1730 - Ա

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ
ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածը և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը և 9-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Որպես նվիրաբերություն Հայաստանի Հանրապետությանն ընդունել Կովկասի բնության հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության կողմից տրամադրված գույքը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքն ամրացնել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայությանը՝ «Vortex Viper 12X50 HD» մոդելի 12 հատ հեռադիտակները էկոպարեկային ծառայության ՀՀ Տավուշի մարզային վարչության կողմից, «Vortex Crossfire 8x42» մոդելի 1 հատ, «Vortex Diamondback 8x42» մոդելի 1 հատ, «Vortex Diamondback 8x28» մոդելի 1 հատ, «Vortex Diamondback 10x28» մոդելի 1 հատ հեռադիտակները ՀՀ Սյունիքի մարզային վարչության կողմից և «Vortex Viper 12X50 HD» մոդելի 8

հատ, «Vortex Viper 10X42 Binocular» մոդելի 1 հատ և «Vortex Crossfire 12x50» մոդելի 1 հատ հեռադիտակները ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչության կողմից պահպանության գործառույթներն իրականացնելու գործընթացում օգտագործելու նպատակով:

3. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Կովկասի բնության հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության հետ համատեղ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության անունից նվիրաբերության պայմանագրի կնքումը և դրա հետ կապված հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը, ինչպես նաև գույքի հաշվառման ծախսերն իրականացնել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

04.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ